




ԲՈԼՈՐ ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ՄԱՅՐԸ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆ Է ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ

3-4(1211-1212) 2019
Հրատարակության
55-րդ տարի

ԱՍՏՂԱԲՈՒՅԼ



Կարծում եմ, որ Արեւմուտքը կարող է անհետանալ, եթե մոռանա իր քրիստոնեական արժանատիների մասին: Բարբարոսներն արդեն այստեղ են: Եւ նրանք կպարտադրեն իրենց մշակույթը, կրոնը, մարդու եւ բարոյականության վերաբերյալ տեսակետները, եթե Արեւմուտքը թուլանա եւ վախենա նրանց որեւէ բան հակադրել: Արեւմուտքի նման մահը կարող է հանգեցնել մարդկության ոչնչացմանը:

Ռոբեր ՍԱՌԱ

կաթոլիկ կարդինալ,
ժամերգության եւ հաղորդության
կարգադրությունների
կոնգրեգացիայի պրեֆեկտ

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՅՑԸ

ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԱՅՑԸ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը 2019թ. ապրիլի 15-ին այցելեց Հայաստանի ազգային ագրարային համալսարան՝ ՀՀ կրթության և գիտության նախարար Արայիկ Հարությունյանի ուղեկցությամբ: Համալսարանում շրջայցից հետո ՀԱԱՀ ռեկտոր Վարդան Ուռուտյանը Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի՝ ուսանողների պարապմունքների և հանգստի սրահում (որը նրանք անվանում են «երազանքների լաբ») ներկայացրեց համալսարանում առկա իրավիճակը, ընթացիկ և առաջիկա բարեփոխումները:

Ագրարային համալսարանում արժանատի էր փորձաքննությունը սկսվել են 2018թ.-ի հուլիսին, երբ բուհի հոգաբարձուների խորհուրդը հիմնովին վերակազմավորվեց, որին հետևեց ռեկտորի նոր պաշտոնակատարի, իսկ դեկտեմբերի 25-ին՝ ռեկտորի ընտրությունը: Համալսարանը դժվարությունների ու փորձությունների միջով հաստատուն քայլերով սկսել է գնալ արդիական ագրոտեխնոլոգիական կրթության տարածաշրջանային առաջատարի իր տեսլականին ընդառաջ: Պարոն Ուռուտյանը նախ խոսեց համալսարանում ստեղծված իրավիճակի մասին: Այն բնութագրվում է տնտեսության առկա պահանջների և բուհի ապահոված կրթության ցածր որակի միջև եղած մեծ անջրպետով, բուհի խիստ ցածր հեղինակությամբ, դասախոսների ու գիտաշխատողների «ճգնաժամային» միջին տարիքով, գերծանրաբեռնված ու հնացած կրթական ծրագրերով, ավելորդ առարկաներով, դասավանդման ավելի քան հնացած մեթոդներով, ուսանող-դասախոս հարաբերություններում արժանատիքից հեռացած մոտեցումներով ու բացասական դրսևորումներով:

Առաջին փուլի կառուցվածքային բնույթի բարեփոխումների (ֆակուլտետների և ամբիոնների թվի օպտիմալացում) մասին խոսելիս, պարոն Ուռուտյանը նշեց, որ դրանք զուգակցվել են բուն ուսումնական գործընթացի բովանդակային ու ձևակարգային փոփոխությունների հետ (թելադրության բացառում, Moodle հարթակի ստեղծում, ինտերակտիվ մեթոդների կիրառում, դասաժամի կրճատում, համակարգչային

ծրագրակազմերի գծով մասշտաբային ինտենսիվ վերապատրաստումներ դասախոսների և ուսանողների համար և այլն): Այժմ ներդրման փուլում է էլեկտրոնային թեստավորման համակարգը: Արդեն ներդրվել են ուսումնական գործընթացի կառավարման ավտոմատացման E-bus համակարգը և էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության Mulberry-2 համակարգը: Սրանք ակնհայտորեն հեշտացնում ու արդյունավետ են դարձնում դասախոսների ու աշխատակազմի աշխատանքը: Բարեփոխումներն ընթանում են տարբեր ուղղություններով՝ մասնագիտական կրթական ծրագրերի օպտիմալացում և արդիականացում, դասախոսների վերապատրաստում, կրթություն-գիտություն-արտադրություն խզված կապի ամրապնդում, տեխնիկական բազայի և լաբորատոր կարողությունների նորացում ու համալրում: Էական փոփոխություններից մեկը վերաբերում է բակալավրիատի 4-ամյա և մագիստրատուրայի երկամյա կրթական ծրագրերին անցումը, ընդ որում բակալավրիատում մեկ կիսամյակը լինելու է գործնական-աշխատանքային: Իրականացվում են ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի արդիականացում և միջազգային հեռանշուն (benchmarking), առարկաների բովանդակության և ուսուցման մեթոդների արդիականացում, դուալ կրթության գաղափարի արժանատիքներ, ինչպես նաև կրթական ծրագրերի վերափոխումներում՝ STEM (գիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն, մաթեմատիկա) ուղղությունների շեշտադրմամբ:

ՀԱԱՀ-ում մեկնարկել է նյութատեխնիկական բազայի համալրման և լաբորատորիաների նորացման գործընթացը՝ տեղական և միջազգային գործընկերների գործունե մասնակցությամբ: Համալսարանում ներդրվում են ֆինանսավորման և ֆոնդազդյացման նորարարական մեխանիզմներ, մասնավորապես աշխատանքներ են իրականացվում ավանդաշնորհային (endowment) ֆոնդի ստեղծման ուղղությամբ: Ստեղծվում և ամրապնդվում են հիմնադրամների, բարերարների, Սփյուռքի կազմակերպությունների հետ գործնական ու բարեկամական հարաբերություններ:



Ուսումնաօժանդակ ենթակառույցների վերազինման, վերապրոֆիլավորման, արդիականացման, նորերի ստեղծման՝ մեկնարկած աշխատանքները ուսանողներին թույլ կտան գնալով ավելի շատ ընդգրկվել լսարանից դուրս գործնական կրթություն ստանալու, մասնագիտական կարևոր հմտություններ ու փորձ ձեռք բերելու գործընթացում։ Այս նպատակին արդեն սկսել է ծառայել համալսարանի՝ Ոսկեհատի գինու ուսումնագիտական կենտրոնը։ Շուտով կսկսվի ՀԱԱՀ-ի նոր, արդիական ջերմատան շինարարությունը, որի կառուցումը ֆինանսավորում է ճապոնիայի կառավարությունը։ Ջերմատան կառուցումը նախատեսվում է ավարտել մինչև սեպտեմբեր։ ՄԱԶԾ-ի հետ գործակցությամբ կվերակառուցվի ՀԱԱՀ-ի ագրոտեխնոլոգիական թեքումով ավազ դպրոցը, Եվրամիության աջակցությամբ ՀԱԱՀ-ի Վանաձորի մասնաճյուղի գյուղատնտեսական քոլեջի նոր մասնաշենքը և Ապարանի գյուղատնտեսական քոլեջ-մասնաճյուղը՝ Վայինշտեֆանի Թրիսդորֆ կիրառական գիտությունների համալսարանի հետ գործակցությամբ։

Վարչապետ Փաշինյանը ծրագրեր իրականացնելու գործընթացում բարերարների ներգրավումը դրական երևույթ համարելով հանդերձ, հորդորեց առաջիկա առաջնահերթ ծրագրերը ներկայացնել նաև կառավարությանը, որը հնարավորություն կտա հստակ ժամանակացույցով, պետականորեն լուծել համալսարանի առջև ծառացած խնդիրները՝ հաշվի առնելով նաև պետական միջոցների ավելացման միտումը։

Շարունակելով առաջիկա ծրագրերի թվարկումը, ռեկտոր Ուռուտյանը նշեց, որ համալսարանի՝ Բալասիովիտի ուսումնափորձական տնտեսության առողջացման և արդիականացման նախագծով նախատեսվում են հետաքրքիր նորարարություններ՝ «խելացի» անասնաֆերմա, հիդրոպոլիսի եղանակով կերարտադրություն, ինչպես նաև կաթնամթերքի արտադրության վարպետների դպրոց։ Ագրոճարտարագիտական լաբորատորիաների արդիականացման, գինեդարանը գինու տուրիզմի և ուսումնական կենտրոնի վերափոխելու, ճշգրիտ գյուղատնտեսության կենտրոնի ստեղծման

ծրագրերն էլ սպասում են իրենց հերթին։

Մեկնարկել են նաև համալսարանի ենթակայության տակ գտնվող գիտական կենտրոնների կարողությունների գնահատման և զարգացման աշխատանքները։

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշեց, որ Ագրարային համալսարանի զարգացումը շատ կարևոր է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գյուղատնտեսության ոլորտը ամենամեծ զբաղվածությունն է ապահովում երկրում։

«Մեր ամենակարևոր խնդիրն է օգնել գյուղացիներին, որ իրենց չարչարանքը դառնա աշխատանք։ Չարչարանքի և աշխատանքի միջև տարբերությունն այն է, որ երկրորդի մեջ հաճույքի ու բավարարվածության շատ մեծ բաղադրիչ կա։ Մեր խնդիրն այն է, որ աշխատանքի գործընթացի մեջ զուտ ֆիզիկական ուժի կիրառումը հնարավորինս նվազի և այդամբողջ գործընթացում հնարավորինս ավելանա մտավոր աշխատանքը։ Իհարկե, աշխատանքը պետք է չարչարանք չլինի։ Շատ ուրախ եմ, որ այն, ինչ ներկայացվում է՝ համահունչ է այդ տրամաբանությանը», - ասաց վարչապետ Փաշինյանը։

Այցի ավարտին Նիկոլ Փաշինյանը ծանոթացավ Ի-Վի-Էն գինու ակադեմիայի գինու քիմիայի ուսումնական լաբորատորիայի աշխատանքին, եղավ համուեսի սրահում։

Վերջին ամիսներին համալսարանը տեղական և միջազգային գործընկերների հետ կնքել է փոխգործակցության բազմաթիվ հուշագրեր ու համաձայնագրեր։ Ներկայումս համալսարանում գործում են կրթական ու հետազոտական բնույթի շուրջ 40 միջազգային ծրագրեր։ Այս առումով Ագրարային համալսարանը ոչ միայն նախաձեռնողի, այլև գործընկերների կողմից համալսարանի հետ գործակցելու նախաձեռնություններին արձագանքողի դերում է։ Համալսարանի հեղինակությունը անընդիատ բարձրանում է հանրության աչքի առջև։ Ունենալով կառավարության և վարչապետի աջակցությունը, Ագրարային համալսարանն ավելի վստահ ջայթելով ու ավելի կարճ ժամանակաշրջանում կանցնի ագրոտեխնոլոգիական զերագանցության կենտրոնի վերափոխման իր ուղին։

ԱԳՐԱՐԱՅԻՆԻ ՊԵՍՏԻՑԻԴՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԻԱԿՆ Է ԻՐ ՏԵՍԱԿՈՎ



Ներկայումս բոլոր երկրներում գյուղատնտեսական մշակաբույսերի պաշտպանությունը մոլախոտերից, վնասատու օրգանիզմներից եւ հիվանդություններից հիմնականում իրականացվում է քիմիական միջոցների՝ պեստիցիդների օգնությամբ, որոնց լայն կիրառումը պայմանավորված է դրանց բարձր տնտեսական արդյունավետությամբ։ Սակայն, միաժամանակ ծառանում է մարդու եւ շրջակա միջավայրի անվտանգության խնդիրը, որը կապված է հողի, ջրի աղտոտման ինչպես նաեւ սննդամթերքի մեջ դրանց մնացորդների կամ քայքայման արգասիքների կուտակման հետ։ Հնարավոր վտանգի նվազեցման համար ժամանակակից պեստիցիդների նկատմամբ առաջադրվում են շատ կոշտ բնապահպանական պահանջներ։ Բացի այդ, ժամանակի ընթացքում բույսերի հիվանդությունների հարուցիչները եւ վնասակար օրգանիզմները կայունություն են ձեռք բերում օգտագործվող պատրաստուկների նկատմամբ։ Այս անցանկալի երեւույթները անհրաժեշտ են դարձնում պեստիցիդների գինանոցի սիստեմատիկ համալրումը ազդեցության տարբեր մեխանիզմներով օժտված նոր պատրաստուկներով։ Մեր գրուցակիցն է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի պեստիցիդների եւ բույսերի պաշտպանության հետազոտական կենտրոնի տնօրեն, ք.գ.դ., պրոֆեսոր, Ռուսաստանի եւ Եվրոպական բնական գիտությունների ակադեմիաների իսկական անդամ Ալեքսանդր Ենգոյանը։

-Պարոն Ենգոյան, երկու խոսքով ներկայացրեք խնդրում եմ Ձեր ղեկավարած գիտական կենտրոնի անցած ուղին։
-Պեստիցիդների սինթեզի եւ փորձարկման պրոբլեմային լաբորատորիան հիմնել է համաշխարհային ճանաչում ունեցող գիտնական, քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ իսկական անդամ, գիտության վաստակավոր գործիչ Վոսմ Վադիանկի Դովլաթյանը 1962-ին, որի շնորհիվ Հայաստանում զարգացել է սինթետիկ օրգանական քիմիայի նոր ուղղություն՝ բույսերի պաշտպանության նոր քիմիական միջոցների մշակում։ Վ. Դովլաթյանը ղեկավարել է լաբորատորիան մինչեւ իր կյանքի վերջը՝ 2005 թ.։ 57 տարվա պատմություն ունեցող այս լաբորատորիան, որը 2018 թվականից վերանվանվել է «Պեստիցիդների եւ բույսերի պաշտպանության հետազոտական կենտրոն» մինչ այժմ միակ մասնագիտացված գիտական

կենտրոնն է ՀՀ-ում։ Մենք ոչ միայն շարունակում ենք ավանդական աշխատանքները, այլ նաեւ ձեռնամուկ ենք եղել նոր ուղղություններ զարգացնելուն՝ երկու, երեք եւ չորս հետերոցիկլիկ օղակների համադրությամբ չկոնդենսված եւ կոնդենսված նոր հետերոհամակարգերի շարքերում ժամանակակից բնապահպանական պահանջները բավարարող պոտենցիալ պեստիցիդային եւ ածախթանիչ ակտիվություններով նոր ածանցյալների, այդ թվում միաժամանակ երկու տարբեր հատկությունով օժտված միացությունների նպատակային սինթեզներ։ Մշակում ենք նաեւ ժամանակակից «Կանաչ քիմիայի» սկզբունքներին համապատասխանող սինթեզների եղանակներ։

Լաբորատորիայում 57 տարվա ընթացքում սինթեզվել է մոտ 18.000 նոր օրգանական միացություն, դրանցից ավելի քան 5.000-ը ենթարկվել է նախնական լաբորատոր փորձարկումների, առավել ակտիվները ընտրվել են ավելի խորը ուսումնասիրությունների եւ դաշտային փորձարկումների համար։ Ստացված միացությունների շարքում հայտնաբերվել են նոր՝ բարձր ակտիվությամբ օժտված հերբիցիդներ, ֆունցիցիդներ, ածախթանիչներ։ Ֆենագոնը, կրոտիլինը, մեթազինը, սուլֆագինը, տրիսուրոնը, սուրամը, անտիգորը ներդրվել են գյուղատնտեսության մեջ։ Ներկայումս դրանց զգալի մասը ներգրավված է հետխորհրդային երկրների բույսերի պաշտպանության քիմիական միջոցների թուլատրված եւ կիրառվող ցանկերում։

Պրոբլեմային լաբորատորիայում կատարված գիտահետազոտական աշխատանքների արդյունքները արտացոլվել են ավելի քան 600 գիտական հոդվածում կամ ներկայացվել են միջազգային գիտաժողովներում։ Վերջին տասնամյակում հոդվածների մոտ 40%-ը հրապարակվել են “Scopus” և “Web of Science” միջազգային բարձրագույն համակարգերում ընդգրկված գիտական ամսագրերում, իսկ միայն 2016-2019-ի ընթացքում միջազգային գիտաժողովներին ներկայացված 7 գեկուցում արժանացել է 1-ին (5), 2-րդ (1) և 3-րդ (1) կարգի մրցանակների։ Սինթեզված լաբորատորիան մինչեւ իր կյանքի վերջը՝ 2005 թ.։ 57 տարվա պատմություն ունեցող այս լաբորատորիան, որը 2018 թվականից վերանվանվել է «Պեստիցիդների եւ բույսերի պաշտպանության հետազոտական կենտրոն» մինչ այժմ միակ մասնագիտացված գիտական

թերեա... Կարո՞ղ ենք խոսել «դովաթյանական դպրոցի» կենսունակության, շարունակականության մասին։

-Անշուշտ։ Գիտական եւ գործնական մշակումների հիման վրա 4 հոգի պաշտպանել է դոկտորական եւ ավելի քան 40-ը թեկնածուական ատենախոսություն։ Այսօր հետազոտական կենտրոնում աշխատում են գիտական ծրագրերի նպատակներն իրագործելու համար անհրաժեշտ բարձրորակ մասնագետներ։ Գիտական աշխատանքները իրականացվում են որոշակի ուղղություններ ունեցող երեք քիմիական սինթեզների խմբերում, որոնք ընդգրկում են լաբորատորիայի ընդհանուր գիտահետազոտական պրոբլեմի ամբողջ սպեկտրը։ Նոր սինթեզված միացությունները ենթարկվում են նախնական լաբորատոր-վեգետացիոն փորձարկումների՝ լաբորատորիայի կենսաբանական խմբում, որոնք ընդգրկում են լաբորատորիայի ընդհանուր գիտահետազոտական պրոբլեմի ամբողջ սպեկտրը։ Նոր սինթեզված միացությունները ենթարկվում են նախնական լաբորատոր-վեգետացիոն փորձարկումների՝ լաբորատորիայի կենսաբանական խմբում, որոնք պեստիցիդային ակտիվությունը որոշելու համար։ Առավել ակտիվ միացությունները ենթարկվում են դաշտային փորձարկումների, որոնցից եւ ընտրվում են գյուղատնտեսության մեջ կիրառելու համար այն պատրաստուկները, որոնք կբավարարեն բնապահպանական ներկա պահանջներին։

-Կենտրոնը համագործակցում է արդյո՞ք արտերկրի հաստատությունների, գործընկերների հետ։

-Կենտրոնում իրականացվող հիմնարար եւ կիրառական գիտական մեծնշանակություն ունեցող աշխատանքները լայն ճանաչում են ստացել ոչ միայն Հայաստանի, այլ նաեւ միջազգային գիտական կենտրոնների շրջանակներում։ Համագործակցում ենք մի շարք ազգային եւ միջազգային գիտական կենտրոնների հետ. ՀՀ ԳԱԱ օրգանական եւ դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական, Մոլեկուլի կառուցվածքի ուսումնասիրության կենտրոնների, մոլեկուլային կենսաբանության, կենդանաբանության, քիմիական ֆիզիկայի ինստիտուտների, Երեւանի պետական, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանների, ՌԴ ԳԱ քիմիական ֆիզիկայի պրոբլեմների եւ Զելինսկու անվան օրգանական քիմիայի ինստիտուտների, ԱՄՆ Կալիֆորնիայի մոլեկուլային բժշկության եւ Տեխասի գիտական ինստիտուտների, Լեհաստանի քիմիական նյութերի կառավարման կենտրոնի, Չեխիայի Բոժո քաղաքի Ասասրիկի համալսարանի գիտնականների հետ։

ԱՄՆ ՍԱՆՄԱՆՆԵՐԻՑ ԴՈՒՐՄ «ՍԻՆՈՓՍԻՍԻ» ԱՄԵՆԱՄԵՇ

ՄԱՍՆԱՅՈՒՐ ԶԱՅԱՏԱՆՈՒՄ Է

Տվյալագիտության ամբիոնի նախաձեռնությամբ, մարտի 21-ին փոքր դահլիճում հյուրընկալել էինք ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, գիտության վաստակավոր գործիչ, տ.գ.դ., պրոֆեսոր, ՀԱՊՀ «Միկրոէլեկտրոնիկային սխեմաներ եւ համակարգեր» միջֆակուլտետային ամբիոնի վարիչ, «Միկոփսիս Արմենիա» ՓԲԸ ուսումնական ղեպարտամենտի տնօրեն Վազգեն Մելիքյանին։ Բանախոսության թեման էր՝ «SS տեխնոլոգիաներ. միկրոէլեկտրոնիկայի արդի հիմնախնդիրները, մարտահրավերները եւ լուծումները»։

Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր Էդուարդ Ղազարյանը ներկայացնելով ականավոր գիտնականին, նշեց, որ տարբեր ոլորտների ակնառու գործիչների հետ հանդիպումները արդեն բարի ավանդույթ են դարձել։

1984-ին ընդամենը երեք համախոհի ջանքերով հիմնված «Միկոփսիս» ընկերությունը, այսօր աշխարհում առաջինն է, անմրցակից։ Երեւնայան

մասնաճյուղը բացվել է 2004-ին։ Այս տարիների ընթացքում աշխատակիցների թիվը 120 հոգուց հասել է 900-ի։

«Միկոփսիսում» ստեղծում են ծրագրեր եւ նախագծում են սխեմաներ։ Պարոն Մելիքյանը հանրամատչելի ներկայացրեց, թե ինչ են իրենցից ներկայացնում ինտեգրալ սխեմաները, ինչպիսին է միկրոէլեկտրոնային շուկայի բաշխվածությունը, ինչ նոր մարտահրավերներ են ծառացած ոլորտի առջեւ։

Հրաժեշտից առաջ, բանախոսը նվիրեց իր հեղինակած «Ինտեգրալ սխեմաների ներածություն» հանրամատչելի աշխատությունը, սիրով պատասխանեց հարցերին եւ պատրաստակամություն հայտնեց կրկին հանդիպել։ Իսկապես, հետաքրքիր զրույց էր, «զբոսանք» էր, մեր կյանքի գրեթե բոլոր ոլորտները զրաված միկրոէլեկտրոնիկայի անընդգրկելի, բարդ, անփոխարինելի աշխարհում...



ՏԵՐ` ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՏԵՐ` ԱՇԽԱՐՀԻՍ

ABIONET ԾՐԱԳՐԻ ԿԵՐՋԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՐԴԵՆ ՆՍՏԱԿԵՑՎԱԾ ԵՆ

2017-ին մեկնարկած, 36 ամիս տևողությամբ, ԵՄ կողմից ֆինանսավորվող ABIONET ծրագրի ընթացքի մասին ՀԱԱՀ ուսանողներն ու աշխատակիցները իրազեկված են լիովին, որովհետեւ մեր բուհից համակարգողը՝ կենսաքիմիայի, մանրէաբանության եւ վիրուսաբանության ամբիոնի վարիչ, կ.գ.դ. Գայանե Մարմարյանը կանոնավոր պարբերականությամբ տեղեկատվություն է սփռում: ՈՒշադիր ընթերցողը գիտե, թե արտասահմանյան որ բուհերի հետ ենք համագործակցում այս ծրագրի շրջանակներում: Կրկնություններից խուսափելու համար նշենք միայն, որ գլխավոր նպատակը կրթությունը-գիտությունը արտադրությանը մոտեցնելն է, որ կապը անբակտեի լինի եւ արդյունավետ: Սրղին կարող ենք ասել, որ գործատուների հետ համագործակցությունը նկատելիորեն ընդլայնվել է:

Ապրիլի 16-ին աշխատակիցներին (նախորդ օրը ուսանողներին) ներկայացրեցին ակնկալվող վերջնարդյունքները: Ըստ այդմ. մագիստրոսական ծրագիրը կտեփ երկու տարի, որովհետեւ լաբորատոր փորձերի մեծ ծավալը հնարավոր չէ իրականացնել մեկ ակադեմիական տարվա ընթացքում: Թեթեացված է առարկայական ցանկը: Կրեդիտները պետք է կազմեն 120: Որոշ կրթական ծրագրեր արդիականացվել են, անվանումները փոփոխվել ու ավելի բարեհունչ-հասկանալի-համադրելի են դարձել արտերկրի գործընկերների համար: Ծրագրով նախատեսված է նաեւ նյութատեխնիկական բազայի նորացում: Տեսանելի ապագայում ձեռք կերվեն սարքավորումներ, սննդամթերքի փորձաքննության լաբորատորիա:

ՀԱԱՀ արտաքին կապերի դեպարտամենտի պետ Գարիկ Համբարձումյանը ներկայացրեց ուսանողների եւ դասախոսների շարժունության հնարավորությունները: Ի մասնավորի, ուսանողները կունենան Start սթ-երի հնարավորություններ: Իսկ աշխատակիցների համար նախատեսված են եւ կարճաժամկետ, եւ երկարաժամկետ գործուղումներ: Քանի որ լսարանում հենց կենսբանական մասնագիտությունների ներկայացուցիչներն էին, ասել է թե հնարավոր շահառուները, դեպարտամենտի պետը հստակ ներկայացրեց պահանջները:

ՄԱՆՐԷԱԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԴԱՍԱԽՈՄ` ԼՈՒՍԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

Տեխնոլոգիական ֆակուլտետի կաթ-կաթնամթերք եւ մանկական ֆունցիոնալ սնունդ մասնագիտության երրորդ, շաասատ հրաշալի կուրսում դասախոսության թեման էր. կենսաբանական գործոնների ազդեցությունը միկրոօրգանիզմների վրա: Երիտասարդ մասնագետը ներկայացրեց հիմնախնդիրները, կարելուր շեշտադրումները, իրազեկեց զարգացման ժամանակակից միտումների մասին: Իսկ հետո թեման ամրակայելու-ամփոփելու նպատակով ինտերակտիվ խաղ-մրցույթ կազմակերպեց: Կուրսը բաժանվեց երկու խմբի, բոլորը հետեւողական էին, որ մրցակիցների կողմից ակադեմիական ազնվությունը պահպանվի, որ գրառում-նշումներից օգտվողներ չլինեն: Ասել, թե մրցակցությունն անգիշում էր, նշանակում է ըստ էության ոչինչ չասել...Համառ պայքարն ավարտվեց հավասար արդյունքով 3:3: Դասալսման ամփոփման ժամանակ բոլորն էլ համակարծիք էին. Լուսինե Ավագյանը լավ աշխատեց ուսանողների հետ:

-Խաղը նորություն էր,-նկատեց պարոն Բադալյանը,-մենք էլ կկիրառենք:

ԼՍԱՐԱՆԱՅԻՆ, ԼԱԲՈՐԱՏՈՐ ԴԱՅՄԱՆՆԵՐ

Գրեցի ենթավերնագիրն ու հասկացա, որ այլեւս ոչինչ չունեմ ասելու: Բոլորս էլ գիտենք՝ հինգերորդ մասնաշենքում վիճակը վատթար է եւ վերջ... Իսկ ամբիոնի վարիչը՝ Գայանե Մարմարյանը լավատեսորեն սպասում է, որ շատ շուտով ապահովված կլինեն ժամանակակից տեխնոլոգիաներով, սարքավորումներով, ինչպես արտերկրի մեր գործընկերների աշխատանքային միջավայրն է (նրանց միայն այս մասով ենք զիջում)... Եւ մեր սաների համար ուսումնառությունը ավելի հետաքրքիր ու արդյունավետ կլինի:

ՎԻՐՈՒՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՍԻՍՏԵՆՏ ԱՆԺԵԼԻԿԱ ՆԱԿՈԲՅԱՆ

Անասնաբուժություն մասնագիտության երկրորդ կուրսում լաբորատոր պարապմունք էր: Թեեւ դասավանդման առաջին տարին էր, բայց Անժելիկա Հակոբյանը (ավարտել է Հերացու անվան բժշկական համալսարանի օրդինատուրան եւ հայցորդ է կենսաքիմիայի ինստիտուտում) վստահ, հանդարտ, համբերատար աշխատում էր ուսանողների հետ, հմտորեն կարողանում էր բոլորին ներգրավել-ներառել գործընթացի մեջ: Հարցադրումները հստակ էին, ճիշտ: Ուսանողների թերի, սխալ պատասխանների դեպքում սպառիչ տեղեկություն էր տալիս, եւս մեկ անգամ բացատրել-հիմնավորելով:

Երկու դասալսումն էլ գոհացնող էր:



ԴԱՍԱԼՍՈՒՄ ԿԱՄ, ԱՎԵԼԻ ՃԻՇՏ, ԳՐԾՐԿԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՅԱՏՈՒՄ

ԳՐԾՆՆԵՐԱՅԻՆ գնահատում, որտեղ հրավիրված եւ ներգրավված են ՀԱԱՀ հմուտ, տարիների փորձով իմաստնացած մասնագետները՝ պրոֆեսորներ Տ. Պապոյան, Ռ. Քամայան, ընդհանուր կենսաբանության ամբիոնի վարիչ Մ. Բադալյան, դոցենտ Օ. Մատինյան, գ.գ.դ. Ս. Ավագյան: Իսկ նախաձեռնության հեղինակը կենսաքիմիայի, մանրէաբանության եւ վիրուսաբանության ամբիոնի վարիչ, կ.գ.դ. Գայանե Մարմարյանն է: Դասալսումները իրականացնում են կանոնավոր պարբերականությամբ: Նպատակը մեկն է. բարյացակամորեն, միանգամայն անչար օգնել, աջակցել սկսնակ, երիտասարդ մասնագետներին:

ՀԱՅՐԵՆԻՔԸ ՀՈՂ Է



ԻՆՉ ԱՍԵԼ Է «ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ» ԵՒ ԻՆՉ ՍՈՈՒՍՈՎ ԵՆ ԱՅՆ ՄԱՏՈՒՅՈՒՄ-ՈՒՏՈՒՄ



Ներկայացվող պատմությունը սկսվեց այն պահին, երբ տեխնոլոգիական ֆակուլտետի մեկ-երկու հետաքրքրված ուսանողուհիներ՝ Ալան, Իվետան, Նունեն փորձեցին ավագ սերնդի միջոցով ճշտել, թե ինչ ասել է «ուսանողակենտրոն» ուսուցում: Դասախոսների պատասխանները կցկտուր էին, հակասական, մեկ դեպքում անգամ արտառոց. «Հեն ա ուսխորհուրդը կա, դա էլ կենտրոնը կլինի...»:

Վիճակը փրկելու նպատակով Իվետան որոշեց, որ լուրջ աշխատանք է պետք իրականացնել սովորեցնող-սովորողների շրջանում հիմնախնդիրը լուրջ ուսումնասիրելու, լավագույն ճանապարհները գտնելու նպատակով:

Աղջիկները դիմեցին լեզուների ամբիոնի վարիչ Արաքս Հակոբյանին, նա էլ համաձայնեց առաջին քայլն անել ու քննարկում կազմակերպել, որին ներկա էին վերը նշված ուսանողներն ու կիրառական մեխանիկայի եւ գրաֆիկայի



ամբիոնի դասախոսներից մի քանիսը: Նրանք միասնաբար փորձեցին հստակեցնել, թե ինչ է կրթությունն ու ինչ բաղադրիչներ է պարունակում: Ուսուցման նպատակ, սովորողի եւ դասախոսի դերեր, փոխհարաբերություններ, դասավանդման մեթոդներ այս ամենը դիտարկվում էր դասախոսակենտրոն եւ ուսանողակենտրոն ուսուցումներն համադրելիս դրականն ու բացասականը կշռել-համեմատելով: Պետք է նշել, որ երկու կողմը շատ համերաշխ աշխատեց եւ ըստ էության տեսակետների բախում-հակասություններ չկային:

Սակայն, վերջում, Իվետայի մեկ ռեպլիկը ասես միանգամից տվեց բոլոր հարցերի պատասխանը. «Սեր ներդրեք, որ ուսանողի համար հաճելի ու ցանկալի լինի դասի գալն ու սովորելը»: Ահա եւ վերջ, բոլոր՝ դասախոսա-ուսանողա-ծնողա-ԿԵՆՏՐՈՆԵՐԸ մեկ հատկանիշ պետք է ունենան. Սեր երիտասարդների նկատմամբ:



ԱՆԳԼԻ ԴԱՍ

Է Իվետան: Սարգիսը փետրվարամսից շաբաթը երկու անգամ, դասերից հետո կուրսեցիների հետ պարապում է անգլերեն: Սկսել են բառացիորեն տառերից: Այսօր արդեն տպավորիչ բառապաշարի են տիրապետում, կամաց-կամաց ազատվում են կաշկանդող բարդույթներից. «Պետք չէ ամաչել, պետք է տնային աշխատանքները կատարել կանոնավոր եւ ամեն դասից հետո կզգաք առաջընթացը, տարբերությունը»,-ասում է ՌՈՄՈՒՑԻՉԸ:

Երիտասարդները իրար լավ ու հեշտ են հասկանում: Նրանց հետաքրքրություններն ու առաջնահերթությունները համադրելի են: Դասավանդման մեթոդները համեղ: Բոլորը գալիս են անուշեղենի փոքրիկ փաթեթներով: Սարգիսն ասում է, թե համի եւ հիշողության կենտրոնները իրար հետ համերաշխ են գործում, համը օգնում է, որ նոր սովորած բառերը հեշտ մտապահվեն, ամրակայվեն: Դատելով երիտասարդների խանդավառությունից եւ ընդամենը երկու ամսվա աշխատանքի արդյունքներից, այս նորամուծությունը «գիտական» հիմք ունի:

ՄԱՍՆԱԿԻՑ 105 ՌԻՍԱՆՈՂԻՑ 12-Ն ԱՅՍՈՒՆԵՏ... ԲԱՅԻԼԱԿԻՐԵՆ

Մարտի 13-ին ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ռոբերտ Մակարյանը հավաստագրեր հանձնեց համակարգչային AutoCad ծրագրի խորացված ուսուցմանը մասնակցած եւ քննությունը հաջողությամբ հանձնած ուսանողներին: Հնորիավորելով, պարոն Մակարյանը նկատեց. թե ձեռք բերված գիտելիքները, հմտությունների այս գործիքակազմը կօգնեն, որ հեշտությամբ գտնեն իրենց տեղը աշխատաշուկայում: Նա հորդորեց երիտասարդներին, որ լինեն գործուն եւ գիտելիքի նկատմամբ իրենց հետաքրքրություններով վարակենՆաեւ մյուսներին: Այսնախաձեռնությունը շարունակական կլինի: Ջիչ հետո, Նույն այս լսարանում ռեկտորատի Նիստի ընթացքում պետք է քննարկենք ակադեմիական պարտքեր ունեցող եւ մեծ ժամաքանակով բացակայած ուսանողների հարցը: Բայց որքան հաճելի է, երբ լավագույններին խրախուսելու առիթներն ավելի հաճախադեպ են՝,վստահեցրեց պրոռեկտորը եւ շնորհակալություն հայտնեց պրոֆեսոր Արա Ամիրյանին, դասախոսներին, որոնք հաջողությամբ իրականացրին ծրագիրը:

105 մասնակցից միայն 12-ն է հաջողությամբ հանձնել քննությունն ու հենց նրանց էլ շնորհեցին հավաստագրեր: Տեխնոլոգիական ֆակուլտետի ուսանողուհիներ Ամալյա Իսկանդարյանը եւ Իվետա Արզումանյանը նախնական գիտելիքներ ունեին AutoCad-ից, սակայն գործիքակազմին ավելի խորությամբ տիրապետելու նպատակով մասնակցեցին դասընթացին եւ շատ զոի էին արդյունքներից:

Լուսինե Սարգսյանը, որը նախաձեռնությունը փայլուն կերպով կյանքի կոչած դասախոսներից է, փաստեց, թե միշտ հաճելի է աշխատել այն ուսանողների հետ, որոնք լավ են հասկանում գիտելիքի դերը եւ նպատակասլաց են: Դուք այսուհետ համակարգչային այս ծրագրի լճացիակիրներ՝ եք եւ մաղթում եմ, որ հաջողությամբ վարակեք մյուսներին՝:



Ինչ եք կարծում, լավ ուսանողի հետ աշխատել-գնահատելուց հետո ինչ են անում սովորական բուհում: Միանգամայն ճիշտ եք՝ լավագույն մաղթանքներով հրաժեշտ են տալիս: Իսկ ագրարայինում վիճակն այլ է: Օրինակ, գիտելիք ունեցող եւ հետաքրքրասեր մարդկանց հետ ուսումնական գործընթացն ավարտելուց հետո, ինֆորմատիկա եւ SS առարկայի դասախոս տիկին Դոնարա Մանուչարյանը աչալորջ հետեւում է նրանց առաջընթացին, խորհուրդներ է տալիս, հնարավորության դեպքում կողմնորոշում-հուշում է աշխատանք գտնելու հնարավորությունների մասին:

Տիկին Մանուչարյանի աջակցության արժանացածներիցԵ ագրարայինճարտարագիտություն ֆակուլտետի գյուղէկետրիֆիկացիա մասնագիտության երրորդ կուրսի ուսանող Գետրգ Հարությունյանը: Երկրորդ կուրսի առաջին կիսամյակում է ուսումնասիրել ինֆորմատիկա առարկան:

-Սիրով էիք սովորում,-հարցնում եմ:

-Այո, բա ոնց, անպատճառ: Որովհետեւ շատ հետաքրիք էր դասը մատուցվում:

-Մանուչարյանի դասերից որեւէ հետաքրքրիր բան կիիշես:

-Ոչ...որովհետեւ բոլոր դասերն էլ հետքաքրքիր էին, հատկապես տրամաբանական շրթաների հետ գործողությունները:

Տիկին Մանուչարյանի «հմուտ աչքից» չլրիպեցին երիտասարդի արագ լուծումներ գտնելու կարողությունը, սուր միտքը, աշխատասիրությունը: Եւ առարկան դասավանդել-վերջացնելուց մեկ տարի անց, երբ տեղեկացավ, որ կապի ինստիտուտում կա շախմատանքի հնարավորություն, անմիջապես երաշխավորեց Գետրգին:

-Գնացի, աշխատանքի էուբյունը, բնույթը երբ ներկայացրեցին, բացատրեցին, շատ հավանեցի: Մեկ-երկու ամիս է ինչ աշխատում եմ, զբաղվում եմ էլեկտրոնիկայով, սինեմաներ հավաքելով: Գետրգն ասում է, որ աշխատանքը ոչ միայն չի խանգարում ուսումնառությանն, այլ ավելի օգնում է, կարգապահ ու կազմակերպված է դարձնում:

ԶՈՒՍՊ, ԽՍՏԱՊԱՆԱՆՋ, ԲԱՅՑ ՌԽԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ



Այս խորագրի հերթական հրապարակումը պրոֆեսոր Ռեփիկ Հարությունյանին է նվիրված։ Բնականաբար, պրոֆեսոր Տաիրա Պապոյանից ավելի լավ ոչ ոք չէր պատմի սիրված դասախոսի, մասնագետի մասին...

Շատ ծանր մասնկություն էր ունեցել։ Հինգ տարեկան էր, երբ ստալինյան հետապնդումների արդյունքում մահվան դատապարտվեց հայրը։ Մորը բանտարկեցին միայն այն «հանցանքի» համար, որ հրաժարվել էր ընդունել, թե ամուսինը ժողովրդի թշնամի է... Նաեւ կրտսերը ուրբ ժաշկին մորաքրոջ խնամքին։ Մինչեւ կյանքի վերջ սիրով ու երախտագիտությամբ էր հիշում մորաքրոջը։ Երեխաներին վնդդեցին հարմարավետ բնակարանից եւ տեղավորեցին նկուղային տարածքում։ Մեկ տարի հետո մայրը վերադարձավ։ Ուսուցչուհի էր։ Ծանրագույն պայմաններում մեծացրեց երեխաներին, որոնցից մեկը ագրոնոմ պիտի դառնար, մյուսը՝ բժիշկ։ Ռեփիկ Հարությունյանի հետագա կյանքը ղեկարգվածների հաղթահարման անընդիստ շղթայի էր նման։ 60-ականներին խորհրդային գիտնականների հետ պատրաստվում էր մեկնել Կուբա՝ Նորանկախ երկրի տնտեսությունը վերականգնելուն աջակցելու Նպատակով։ Մոսկվայում քիչ էր մնում արգելելին մեկնումը։ Բայց հաղթեց Նրա պայքարելու ունակությունը։ Շատ հումորով էր, դրա շնորհիվ էլ կարողանում էր հաղթահարել անարդարություններն ու ղեկարգությունները։

Նրա բոլոր երեխաները ավարտել են գյուղինստիտուտն ու իրենց ոլորտների հրաշալի մասնագետներ են դարձել։ Եւ հպարտ են իրենց կրթությամբ, շնորհակալ են հարազատ բուհի, սիրելի դասախոսների տված գիտելիքների ու հմտությունների համար։ Կրտսեր դուստրը մագիստրատուրան ավարտել է Հունաստանի Միջերկրածովյան ագրարային համալսարանում, իսկ գիտական թեզը կատարել եւ պաշտպանել է Ավստրիայում։

Հրաշալի հայր էր ու պապիկ։ Ավագ թոռը, որը պատվով կրում է պապի անունը, բակավարկիստը անցել է Հայաստանում ֆրանսիական, մագիստրատուրան՝ ամերիկյան համալսարաններում։

Շատ կարողացած էր, բազմակողմանի զարգացած։ Ամենասիրելի բանաստեղծը Վահան Տերյանն էր, որի ժողովածուն միշտ ձեռքի տակ էր։ Մի անգամ գրուցում

էինք գրականության, պոեզիայի հարցերի շուրջ, եւ ցնցվել էի, երբ Նա Պուշկինի «Եւգենի Օնեգինը» անգիր ասմունքեց։ Չէի կարող հիացմունքս թաքցնել։ Նա միշտ հիանում էր «բայլոդ հանրագիտարան»՝ Վ. Դովլաթյանի իմացության սահմաններով։ Բարձր էր գնահատում Ա. Թարվերդյանի խորագիտությունը՝ էրուդիցիան։ Ագրոֆակի դեկան եղած տարիներին, երբ աշխատանքային քննարկումների էր գնում ռեկտորի մոտ, հետո անպատճառ գրույցի էին բռնվում արվեստի, երաժշտության, պատմության հարցերով։

Նա եղել է ագրոքիմիայի ամբիոնի վարիչ, ագրոնոմիական ֆակուլտետի դեկան։ Ուսանողների համար իսկական ընկեր էր՝ հետաքրքրվում էր ոչ միայն նրանց առաջադիմությամբ, այլ նաեւ շատ լավ տեղյակ էր յուրաքանչյուրի դժվարությունների մասին եւ հնարավորությունների սահմաններում աջակցում էր։ Ուսանողները պաշտում էին նրան, հաճախ էին խորդակցում, համոզված, որ ճիշտ ուղին կօգնի գտնել։ Տարիներ անց, շրջանավարտները մեզ հրավիրում էին իրենց կուրսերի հորելյանական հավաքներին։ Այդ ամենն անմոռանալ է։ ...Անցյալ տարի առաջին անգամ առանց Նրա մասնակցեցի նման մի երեկոյի։ Մեր սիրելի կուրսերից մեկի ուսանողներն էին հրավիրել։ Ողջ երեկոյի ընթացքում Ռեփիկը մեզ հետ էր...

Խոնարհվում եմ այն շրջանավարտների առջեւ, ովքեր հիշում են մեզ ոչ միայն փոխանցած գիտելիքների, այլ նաեւ մեր արդարացի, անաչառ վերաբերմունքի, բարոյականության դասերի համար։ Ուսուցչի համար ավելի մեծ երջանկություն եւ գնահատական չկա։

Ռեփիկի 70-ամյակի կապակցությամբ ագրոֆակի ուսանողները շնորհավորական ուղերձ էին պատրաստել։ Բոլորն այդ մասին գիտեին բացի հորեյլարից։ Դասախոսներին հրավիրել էին 203 լսարան։ Ուսանողներից մեկը այլալված, խուճապի մատնված վազել էր դեկանի սեյնյակ ու բացականչել. -Ընկեր Հարությունյան, 203 լսարանում ջրիեղել է, վերեդից կաթում է։

Ռեփիկը, ընականաբար անհանգստացած վազել էր այնտեղ... բոլորը հոտնկայս ծափահարում էին... Նա շատ շփոթվեց ու հուզվեց ... հետեւեցին ջերմ ողջույններ եւ շնորհավորանքներ...



ԿՈՄՈՒՆԻԿԱՑԻՈՆ ԹԻՎ ՄԵԿ ԼԵԶՈՒՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ



«Ինչո՞ւ է անհրաժեշտ լավ իմանալ անգլերեն» այս հարցի պատասխանն ու անհերքելի հիմնավորումները համատեղ որոնեցին ու գտան Հայաստանի ազգային ագրարային եւ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանների անգլերենի ակումբների ուսանողները։ Ակումբների մասին «Հասկի» ուշադիր ընթերցողներն արդեն տեղյակ են. Սարգիսը՝ ՀԱԱՀ-ից եւ Գայանեն ՀՊՏՀ-ից, կամավոր հիմունքներով Նախաձեռնեցին անգլերենի դասընթացներ։ Նպատակը մեկն էր՝ օգնել ընկերներին լեզվի իմացության մակարդակը բարձրացնելու հարցում։ Սարգիս գործը ավելի բարդ էր, ի տարբերություն ապագա տնտեսագետների, որոնք բուհի ընդունվում օտար լեզվի քննություն հանձնելով, ագրարայինցիներից շատերի գիտելիքները տառաճանաչ լինելուց այն կողմ չէին անցնում։ Պարապմունքները սկսեցին փետրվարին եւ հիմա արդեն ամփոփում էին առաջին փուլը՝ հաջորդ ուսումնական տարվանից շարունակելու հաստատականությունը։ Շաբաթներ առաջ ագրարայինցիները հյուրընկալվել էին ՀՊՏՀ-ում, հիմա պատասխան

այցի ժամանակն էր։ Երկու բուհի ռեկտորները աջակցել էին ուսանողներին, որ հանդիպումը բարձր մակարդակով կայանա։ Հանդիպման վայրը ԱՌԻԿ-ի «Երազանքների սրահն» էր, հարմարավետ, անմիջական ու անկաշկանդ շփումների տրամադրող։ Սարգիսն ու Գայանեն փոքրիկ մրցույթներ, գվարձալի խաղեր էին մտածել-նախապատրաստել, որոնց հետաքրքրությամբ ու սիրով հետետում եւ քաջալերում էին Կիրջինիայի համալսարանից մեր հին ու բարի գործընկերը՝ Անջելա Նուրնը, դոցենտ Աննա Թումանյանը, տեխնոլոգիական ֆակուլտետի փոխդեկան Աննա Պետրոսյանը։ Այս հրաշալի հանդիպման ավարտին բոլորին շնորհվեցին դասընթացներին մասնակցության հավաստագրեր։ Մրցակցությունն էլ անգիջում էր, սակայն...պարտվողներ չեղան։ Բոլորը հաղթել էին ու հաղթահարել անգլերենով հաղորդակցվելու բարդույթը։ Իսկ մնացածն արդեն հետետողական աշխատանքով կրպցնեն։



ТЯЖЕЛО В УЧЕНИИ, ЛЕГКО В БОЮ

Հայազգի գորահրամանատար Սուվորովի այս խոսքերը լավագույնս բնութագրում են կրթության ոլորտը։ Հենց այս անձառելի-անհերքելի ճշմարտությունից ելնելով, ջրային ռեսուրսների կառավարման ամբիոնի վարիչ, գ.գ.դ., պրոֆեսոր Գուրգեն Եղիազարյանը աշխատակիցների հետ միասին, դիպլոմային Նախագծերի պաշտպանությունից առաջ, «գորքի» վերջին, աչալուրջ ստուգումն իրականացրին սովորեցնել-կարեւորելով բոլոր մասնուքները՝ ինչպես մոտենալ ամբիոնին, ինչպես դիմել ներկաներին...մի խոսքով գիտության գեղագիտական ու բարոյագիտական բոլոր նրբերանգները պահել-պահպանելով։ Նրբերանգներ, երբ ոչինչ երկրորդական չի կարող լինել։



«ԱՆՀԱՋՈՂԱԿՆԵՐԻ» ՀԱՋՈՂԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Սարգիսը ագրարային համալսարանից է, կաթ-կաթնամթերքի եւ մանկական ֆունկցիոնալ սննդի տեխնոլոգիա մասնագիտության երրորդ կուրսեցի։ Միջազգային փոխանակման ծրագրով մեկ կիսամյակ սովորել է Իտալիայում։ Գայանեն ուսանում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում, կառավարման ֆակուլտետի առաջին կուրսում։ Գործունյա եւ հետաքրքրասեր այս մարդիկ ծանոթացել են EYP-ում՝ Եւրոպայի երիտասարդաց խորհրդարանում։

-Տեւական ժամանակ երկուսս էլ ծրագրեր էինք ներկայացնում, որոնք հավանության չէին արժանանում եւ այս հանգամանքը ավելի մտերմացրեց մեզ։ Անհաջողակներ էինք,-այսօր արդեն փոքրիկ «ձախողումների» մասին կատակով է հիշում Սարգիսը։

Հետո «անհաջողակներով» որոշեցին անգլերենի ակումբներ ստեղծել իրենց բուհերում եւ ընկերների համար անվճար դասընթացներ կազմակերպել՝ ուսուցման խիստ յուրօրինակ, արդյունավետ մեթոդներով (մեթոդների մասին խոստանում եմ պատմել վաղը)։

Մարտի 26-ին ՀՊՏՀ ուսանողները ագրարայինցիներին հրավիրել էին իրենց բուհ՝ անգլերեն լեզվով կլինողիման։ Սկզբում ծանոթացան, տեղեկացան մեկմեկու հետաքրքրությունների մասին։ Տանտերերը լավ էին Նախապատրաստվել՝ անուշեղեն, թեյ, սուրճ, հանգամանքներ, որոնք ավելի հարմարավետ ու «ջերմ» են դարձնում կլինողիտումը։ Ֆիլմն էլ եր անուշ՝ «Շառլին եւ շոկոլադի ֆաբրիկան»։

Հիմա արդեն ագրարայինցիներն են պատրաստվում հյուրընկալել ՀՊՏՀ սաներին։ Նրանք էլ բժախնդրորեն կընտրեն ֆիլմը, լսարանը, որ ամենը լինի ըստ պատշաճի։ Չէ որ իրենց համախոհներին պետք է դիմավորեն։ Հրաշալի է, երբ երիտասարդ մարդկանց օրը հազեցած է լինում...

Հ.Գ. Կրկնակի հրաշալի է, երբ ուսանողների հետ գնում են ՀՊՏՀ, իսկ այնտեղ հազար տարվա գործընկերը է՝ լրատվության եւ հախարային կապերի բաժնի վարիչ Գոհար Գեւորգյանը... Հ.Գ.-1 Ուսանողների այս Նախաձեռնության մասին տեղեկացա Իվետայից, շատ խելացի, ուշիմ, անչափ գործունյա Իվետա Արզումանյանից։

ՀՈՆԿՈՆԳԻ «ՀԱՅՐԸ»... ՀԱՅ ԷՐ




Վիկտորյա քաղաքի ավիամերձ տարածքը պատվեց հողով, կառուցվեցին հազարավոր շենքեր եւ լուծվեց մարդկանց բնակարաններով ապահովելու խնդիրը:

«Daily Mail»-ը գրել է. «Չաթերը ինքնուրույն վերականգնեց Հոնկոնգի պատմական զարգացման ծրագիրը, որը ընկած է 21-րդ դարի կառուցապատման հիմքում: 1902-ին արժանացավ ասպետի աստիճանի եւ այդուհետ կոչում էին սեր Խաչիկ Պոլ Չաթեր:

Այսօր այգիներ, փողոց, շինություններ, մետրոյի կայարան կրում են «Հոնկոնգի արքայազնի» Չաթերի անունը:

Սակայն, մեզ համար ամենակարեւորն անշուշտ Աստվածատրյանի հայանպաստ ընդգրկուն գործունեությունն է: Մեծ բարեգործը ահռելի միջոցներ էր ուղղում հայկական գաղթավայրերում կրթության գործը բարձր մակարդակով կազմակերպելու նպատակով:

«Այս երիտասարդ հայը իրենով լցրեց ողջ Հոնկոնգը», - պատկառանքով արձանագրում էին ժամանակակիցները: Ո՞վ էր նա: Խաչիկ Պոլ Չաթերը (Խաչիկ Պողոսի Աստվածատրյան) ծնվել է Կալկաթայում, թեեւ 13 երեխա էին, բայց հայրը քաղժառայող էր, հաշտարար դատավոր, ուստի թվում էր, թե ընտանիքի բարեկեցիկ կյանքն ապահովված է... Ավաղ: Ութ տարեկան էր, երբ կորցրեց հորը, երկու տարի անց՝ նաեւ՝ մորը եւ պարտավոր էր հոգալքույր-եղբայրների կարիքները: 18 տարեկան էր, որ մեկնեց Հոնկոնգ: Շատ արագ հարմարվեց տեղի ֆինդային բորսայի եռուզեռին, շուտով դարձավ ֆինանսական ակնառու գործակալ, զուգահեռաբար սկսեց զբաղվել հողի եւ ոսկու ձուլակտորների առք ու վաճառքով: Աշխատասիրության եւ գործարար բացառիկ ունակությունների շնորհիվ արագ հարստացավ, դարձավ Հոնկոնգի, եւ, ընդհանրապես, Ասիայի ամենաազդեցիկ մարդկանցից մեկը: Տուփնում էր խոշոր բանկեր, անձայրաժիր հողակտորներ, ուներ առեւտրային տորմիդ, աշխարհում առաջին էլեկտրակայաններից մեկը՝ նա է կառուցել հեռավոր 1890-ին: Մինչ այդ արդեն հիմնել էր Հոնկոնգի առաջին, խոշոր կաթնային ֆերմերային տնտեսությունը: Նաեւ Խաչիկ Պոլի շնորհիվ է, որ Հոնկոնգը մինչ օրս բացառիկ դիրք է գրավում համաշխարհային տնտեսական համակարգում: Աստվածատրյանը ֆինանսավորեց «Praya Rocla mation» նախագիծը, որի շնորհիվ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ3-4
2019

Լրատվական գործունեություն իրականացնող՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հիմնադրամ, հասցե՝ Տերյան 74 պետոեգիստրի վկայական՝ 273.210.03231, տրված 10.06.2002 թ.

գրանցված է ՀՀ ԱՆ, վկայական 01Մ000153
Խմբագրության հասցեն՝ ՀԱԱՀ, 1-ին մասնաշենք,
4-րդ հարկ e-mail: a_khudaverdyan@mail.ru

խմբագիր, համարի պատասխանատու եւ ձեւավորող՝
ԱՆԻ ԽՈՒՂԱՎԵՐԴՅԱՆ